ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 12 փետրվարի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Թունյանի

Անդամակցությամբ՝ Ա. Գյուլումյանի

Ա. Պետրոսյանի

Քննության առնելով Թադևոս Աբգարյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Թադևոս Աբգարյանը 2018թ. հունվարի 24-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը ճանաչել հակասող Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին և 5-րդ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել հակասող Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ, 23-րդ, 63-րդ հոդվածներին և ճանաչել դրանք անվավեր»:

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ դիմողը նշում է, որ, ըստ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների, եթե առկա է սուտ մատնության /ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդված/ վերաբերյալ անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի չվերացված որոշում, ապա այդ անձն ազատվում է պատասխանատվությունից նաև սուտ ցուցմունք /ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդված/ տալու համար: Վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ դիմողը գտնում է, որ վիճարկվող վերոնշյալ նորմը հակասության մեջ է գտնվում վերջինիս հետ՝ չներկայացնելով ենթադրյալ հակասության վերաբերյալ իրավական հիմնավորումներ, փաստարկներ:

ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ դիմողի փաստարկները հանգում են նրան, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված իրավական դիրքորոշման պայմաններում Սահմանադրությամբ երաշխավորված արժանապատվության իրավունքը կորցնում է իր անմիջական գործողությունը:

2. Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով և ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներից՝ գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

գործի դատավարական նախապատմությունը ցույց է տալիս, որ Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Մ. Ենգիբարյանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 1-ի որոշմամբ Թ. Աբգարյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 17200615 քրեական գործը, որը ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Դանիելյանի՝

2015 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ կարճվել է և Հովհաննես Մկրտչյանի և Արփինե Սամվելյանի կողմից սուտ ցուցմունք տալու դրվագով նրանց նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ նրանց արարքներում հանցակազմի բացակայության հիմքով, այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով: Ընդ որում, Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2017 թվականի հունվարի 13-ի որոշման մեջ արձանագրել է, որ «... Հ. Մկրտչյանի և Ա. Սամվելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով քրեական հետապնդում չի իրականացվել՝ նրանց արարքներում հանցակազմի բացակայության, այլ ոչ թե քննիչի չվերացված որոշման առկայության հիմքով ...»: Մինչդեռ դիմողը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի ենթադրյալ հակասահմանադրականությունը հիմնավորող փաստարկներում մատնանշել է, որ «... եթե առկա է սուտ մատնության /ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդված/ վերաբերյալ անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի չվերացված որոշում, ապա այդ անձը ազատվում է պատասխանատվությունից նաև սուտ ցուցմունք /ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդված/ տալու համար»:

Ինչ վերաբերում է դիմողի կողմից վիճարկվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասին, ապա այն պարունակում է «խրախուսական նորմ» և ուղղված է այն անձանց քրեական պատասխանատվությունից ազատելուն, որոնց նկատմամբ **սուտ ցուցմունք կամ կեղծ եզրակացություն տալու կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար** հարուցվել է քրեական գործ, և հարուցված քրեական գործի շրջանակներում նրանք հանդես են եկել կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակում: Մինչդեռ խնդրո առարկա գործի շրջանակներում ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի համատեքստում դիմողը հանդես է եկել որպես տուժող:

Անհատական դիմումին առաջադրվող սահմանադրական և օրենսդրական պահանջներից մեկն էլ այն է, որ անհատական դիմում կարող է ներկայացնել այն անձը,

որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է օրենքի դրույթ: ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ **«օրենքի դրույթի կիրառում»** հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ՀՀ սահմանադրական դատարանը բացահայտել է իր՝ 2008 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-747 որոշման մեջ, մասնավորապես արտահայտելով իրավական դիրքորոշում առ այն, որ «...ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «...իր նկատմամբ **կիրառված** օրենքի դրույթի...» բառակապակցության մեջ **«կիրառում»** հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «**կիրառում»**, երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետևանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «**կիրառում»:**

Համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ սահմանադրական դատարան կարող են դիմել՝ ... «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»: ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները: Դիմում կարող է ներկայացնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը,

- որը հանդիսացել է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից,

- **որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է օրենքի դրույթ,**
- որի նկատմամբ վիճարկվող դրույթը կիրառվել է գործը լուծող վերջնական դատական ակտով,
- որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար **իրավասու սուբյեկտ չէ**:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Թադևոս Աբգարյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

12 փետրվարի 2018 թվականի
ՍԴԴԿՈ/1-4